ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ԴՏՊ-1141-11016/24Թ

«01» 02 2024 թ.

Քաղ. Երևան

Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը (այսուհետ՝ նախարարություն) ի դեմս գլխավոր քարտուղար Սամվել Մուրադյանի (այսուհետ՝ պատվիրատու), որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Թալին-Հույս» սոցիալական հասարակական կազմակերպությունը (այսուհետ՝ կազմակերպություն) ի դեմս կազմակերպության նախագահ Անահիտ Աբգարյանի (այսուհետ՝ կատարող), որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի 2323-Ն որոշումը (այսուհետ՝ որոշում), «1141 Ընտանիքներին՝ կանանց և երեխաներին աջակցություն» ծրագրի «11016 «Ընտանիքում բռնության ենթարկված անձանց աջակցության կենտրոնների ծառայություններ» միջոցառման (այսուհետ՝ միջոցառում) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան և գինը

1.1. Պայմանագրով նախարարությունը պարտավորվում է միջոցառման իրականացման նպատակով պայմանագրի 5.1.-ին կետով սահմանված կարգով կազմակերպությանը հատկացնել որոշմամբ նախատեսված՝ գումարից մինչև 13,000,000 (տասներեք միլիոն) ՀՀ դրամ, որից 6,000,000 (վեց միլիոն) ՀՀ դրամը նախատեսված է կանանց տնտեսական հզորացմանն ուղղված ծառայությունների մատուցման նպատակով: Կազմակերպությունը պարտավորվում է ծրագիրն իրականացնել որոշմամբ և սույն պայմանագրով սահմանված կարգով:

1.2. Միջոցառմամբ նախատեսված՝ կազմակերպության կողմից իրականացվելիք միջոցառումները (այսուհետ՝ միջոցառումներ) ներկայացված են պայմանագրի N 1 և N 7 հավելվածներում: Միջոցառումն իրականացվում է Արագածոտնի մարզում՝ 115 շահառուի համար, որից 22-ին մատուցվելու են նաև կանանց տնտեսական հզորամցմանն ուղղված ծառայություններ:

1.3. Պայմանագրի գինը կարող է փոփոխվել երկկողմ համաձայնությամբ՝ պայմանագրի 9.6 կետի համաձայն նոր համաձայնագիր կնքելու դեպքում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. Նախարարությունն իրավունք ունի՝

2.1.1. ցանկացած ժամանակ (այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության միջոցով) ստուգելու կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

2.1.2. որոշմամբ սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և կազմակերպությունից պահանջելու վճարել պայմանագրի 6.2.-րդ կետով նախատեսված տուգանքը.

2.1.3. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. կազմակերպությունը ժամանակին չի սկսում միջոցառման իրականացումը, կամ միջոցառման իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ՝ պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում չի իրականացվելու,

բ. կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է միջոցառմամբ նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում միջոցառմամբ սահմանված պահանջներին.

2.1.4. պայմանագիրն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ կամ պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. իրականացված միջոցառման արդյունքը նախարարության կողմից ընդունվելու դեպքում պահանջելու վճարել իրեն հասանելիք գումարը.

2.2.2. նախարարության կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները.

2.2.3. նախարարության համաձայնությունը ստանալու դեպքում՝ կատարել Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից տրամադրվող ֆինանսական միջոցների հոդվածային վերաբաշխում՝ բայց ոչ ավելի, քան պայմանագրի N 6 հավելվածով սահմանված ֆինանսական նախահաշվի ծախսային յուրաքանչյուր հոդվածի 10%-ի չափով:

2.3. Նախարարությունը պարտավոր է՝

2.3.1. միջոցառմամբ նախատեսված դեպքերում աջակցել կազմակերպությանը.

2.3.2. կատարել միջոցառման իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ.

2.3.3. իրականացնել միջոցառմամբ նախատեսված այլ աշխատանքներ.

2.3.4. իրականացված միջոցառման մասին ներկայացված կատարողական հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել պայմանագրի 4.2.-րդ կետում նշված ժամկետում:

Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումը համապատասխանում է միջոցառման և պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. իրականացնել միջոցառման շրջանակներում նախարարության կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման N 20 ստանդարտի դրույթներին համապատասխան հաշվառում.

2.4.2. պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել միջոցառմամբ և (կամ) պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով.

2.4.3. կատարել նախարարության կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները.

2.4.4. պայմանագրով սահմանված կարգով մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսվա 10-ը, իսկ դեկտեմբեր ամսվա համար՝ մինչև դեկտեմբերի 20-ը, նախարարությանը ներկայացնել հանձնման-ընդունման ակտը՝ համաձայն պայմանագրի N 5 հավելվածի, և հաշվետվությունները՝ համաձայն պայմանագրի N 3 հավելվածի, ինչպես նաև միջոցառումների իրականացման մասին եռամսյակային հաշվետվություններ՝ մինչև հաշվետու ժամանակահատվածի հաջորդող ամսվա 10-ը, իսկ չորրորդ եռամսյակի համար՝ մինչև դեկտեմբերի 20-ը, և տարեկան հաշվետվություն՝ միջոցառման ավարտից հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, եռամսյակային և տարեկան հաշվետվությունները՝ համաձայն N 2 հավելվածի.

2.4.5. պայմանագրի գործողության ընթացքում ապահովել միջոցառման իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու նախարարության հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում.

2.4.6. նախարարության կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում կազմակերպությունը պարտավորվում է անվճար՝ նախարարության կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները.

2.4.7. պայմանագրով սահմանված միջոցառումների տարեկան արդյունքները թերակատարելու դեպքում, դրա արդյունքում առաջացած գումարները վերադարձնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ մինչև տվյալ բյուջետային տարվա նախավերջին աշխատանքային օրը.

2.4.8. պայմանագրի 4.1-ին կետով սահմանված հանձնման-ընդունման ակտի հետ միաժամանակ Նախարարություն ներկայացնել կատարված փաստացի ծախսերի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2007 թվականի հունվարի 9-ի N 5-Ն հրամանով սահմանված տնտեսագիտական դասակարգման սինթետիկ հաշվառմամբ հաշվետվությունը՝ համաձայն պայմանագրի N 3 հավելվածի: «Հաշվետվությանը կից անհրաժեշտ է ներկայացնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից փոխհատուցման ենթակա գումարների մասով կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթեր, ինչպես օրինակ՝ հաշիվ ապրանքագրեր, վճարման հանձնարարականներ, աշխատաժամանակի հաշվարկի թերթիկ, աշխատավարձի հաշվարկի կամ վճարման տեղեկագրեր, ճանապարհածախսերի փոխհատուցման թերթիկ և այլն»:

2.4.9. միջոցառման իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան:

3. Մոնիթորինգը (ըստ պահանջի)

3.1. Նախարարությունն ըստ պահանջի միջոցառման իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

3.2. Մոնիթորինգն իրականացվում է Նախարարության և (կամ) նրա կողմից լիազորված կազմակերպության կամ անձի կողմից բացառապես նախօրոք մշակված հարցաթերթի միջոցով և (կամ) ըստ անհրաժեշտության՝ առանց հարցաթերթի:

3.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով կազմակերպությանը տրվում են ցուցումներ և առաջարկություններ:

3.4. Նախարարությունը ցանկացած ժամանակ կարող է կատարվող գործողությունների շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով գործողություններին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր, ինչպես նաև կապ հաստատելով միջոցառման շահառուների հետ՝ նրանց շրջանում հարցում և եզրակացություն տալու նպատակով՝ առանց կազմակերպությանը տեղեկացնելու կամ ներգրավելու այս գործընթացում:

3.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

3.6. Եռամսյակային հաշվետվությունների ներկայացված և համապատասխան հիմնավորող փաստաթղթերի հիման վրա բոլոր արդյունքային ցուցանիշների կատարողականը գնահատվում է համապատասխան վարչության կողմից՝ ըստ անհրաժեշտության ամփոփ վերլուծությունների և մոնիթորինգի վարչության հետ համատեղ:

4. Պայմանագրի արդյունքի հանձնման և ընդունման կարգը

4.1. Պայմանագրի արդյունքն ընդունվում է նախարարության և կազմակերպության միջև հանձնման-ընդունման ակտի ստորագրմամբ:

Մինչև պայմանագրով ստանձնված պարտավորությունների կատրման համար նախատեսված օրը ներառյալ կազմակերպությունը էլեկտրոնային համակարգի միջոցով նախարարությանն է տրամադրում իր կողմից հաստատված՝ հանձնման-ընդունման ակտը (N 5 հավելված) և հաշվետվությունը (N 3 հավելված):

4.2. Եթե իրականացված միջոցառումը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, նախարարությունը պայմանագրի 4.1.-ին կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային համակարգի միջոցով կազմակերպությանն է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման ակտը:

4.3. Եթե իրականացված միջոցառումը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա նախարարությունը չի ստորագրում հանձնման-ընդունման ակտը և պայմանագրի 4.2.-րդ կետում նշված ժամկետում էլեկտրոնային համակարգի միջոցով կազմակերպությանը հետ է վերադարձնում հանձնման-ընդունման ակտը՝ նշելով դրա չստորագրման համար հիմք հանդիսացած անհամապատասխանությունը: Սույն կետի կիրառման դեպքում նախարարությունը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և կազմակերպության նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

Եթե պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ներկայացվում են ոչ պատշաճ, ապա այս դեպքում նախարարության կողմից 4 աշխատանքային օրվա ընթացքում այն վերադարձվում է՝ առկա թերությունները շտկելու և 3 աշխատանքային օրվա ընթացքում կրկին ներկայացնելու համար: Այն դեպքում, երբ կազմակերպությունը 3 աշխատանքային օրվա ընթացքում նախարարության կողմից ներկայացված թերությունները չի շտկում և կրկին ներկայացնում է նույն թերություններով՝ ապա այս դեպքում նախարարությունը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և կազմակերպության նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4. Եթե պայմանագրի 4.2.-րդ կետով սահմանված ժամկետում նախարարությունը չի ընդունում պայմանագրի 4.1.-ին կետում նշված փաստաթղթերը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա իրականացված միջոցառումը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2.-րդ կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը նախարարությունը էլեկտրոնային համակարգի միջոցով կազմակերպությանն է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման ակտը:

5. Վճարման կարգը և ժամկետները

5.1. Կազմակերպությանը վճարումները կատարվում են հանձնման-ընդունման ակտի հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (N 4 հավելված) նախատեսված ամիսներին, ըստ պայմանագրի շրջանակներում փաստացի իրականացված միջոցառումների կատարման արդյունքի:

Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը, եթե միջոցառմամբ սահմանված չեն վճարումների կատարման այլ կարգ և (կամ) ժամկետներ:

6. Կողմերի պատասխանատվությունը

6.1. Կազմակերպությունը պատասխանատվություն է կրում պայմանագրով ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

6.2. Պայմանագրի N 1 և N 7 հավելվածներում նշված միջոցառման չհամապատասխանող պարտավորություն իրականացնելու յուրաքանչյուր դեպքում կազմակերպությունից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 1.1.-ին կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում՝ տուգանքը հաշվարկվում է նաև պայմանագիրը սահմանված ժամկետներում կատարելու, սակայն նախարարության կողմից չընդունվելու, հաշվետվությունները պայմանագրով սահմանված ժամկետներում չներկայացնելու, ինչպես նաև 4.3 կետում նշված ժամկետում թերությունները չվերացնելու դեպքերում:

6.3. Պայմանագրով նախատեսված միջոցառման կատարման ժամկետը խախտելու դեպքում կազմակերպությունից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ պայմանագրի 1.1.-ին կետում նախատեսված գումարի 0.05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.4. Պայմանագրի 6.2.-րդ և 6.3.-րդ կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են միջոցառման իրականացման արդյունքում կազմակերպությանը վճարման ենթակա գումարների հետ:

6.5. Նախարարության կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6. Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7. Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. Պայմանագրի գործողության ժամկետը

7.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը: Պայմանագրի գործողությունը տարածվում է 2024 թվականի հունվարի 1-ից ծագած հարաբերությունների վրա:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է պայմանագիրը ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

8.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. Եզրափակիչ դրույթներ

9.1. Այն դեպքում, երբ օրենսդրությամբ նախատեսված կարգով օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ մրցույթի գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, պայմանագրի կողմը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս հաղթող կազմակերպություն ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում սույն կարգի պահանջներին, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո նախարարությունը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը

հայտնի լինելու դեպքում, Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն, հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում՝ նախարարությունը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով պայմանագրի կողմի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով նախարարության կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

9.2. Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

9.3. Կազմակերպության կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը նախարարությունը հրապարակում է իր պաշտոնական՝ https://www.mlsa.am/?cat=142 կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը:

9.4. Կազմակերպությունը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը սույն կետում նշված կայքում հրապարակվելու օրը նախարարությունն այն ուղարկվում է նաև կազմակերպության էլեկտրոնային փոստին:

9.5. Պայմանագրով ստանձնած պարտավորությունը դադարում է կատարման անհնարինությամբ, եթե դա առաջացել է այնպիսի հանգամանքից, որի համար կողմերից որևէ մեկը պատասխանատու չէ՝ պայմանագրի կատարման անհնարինության մասին ողջամիտ ժամկետում գրավոր ծանուցելով մյուս կողմին: Այդ դեպքում կողմերն իրավունք չունեն միմյանցից պահանջելու պարտավորության կատարում: Սույն կետում նշված պայմանագրի կատարման անհնարինության մասին ողջամիտ ժամկետում մյուս կողմին չծանուցելու դեպքում՝ չծանուցող Կողմը պարտավորվում է մյուս կողմին վճարել տուգանք՝ պայմանագրի 1.1.-ին կետում նախատեսված գնի 1 %-ի չափով:

9.6. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

9.7. Սույն պայմանագիրը կազմված է 25 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4, N 5, N 6 և N 7 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

9.8. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	«Թալին-Հույս» սոցիալական հասարակական կազմակերպություն
Ք. Երևան, կառավարական տուն 3	ՀՀ, Ք.Թալին Գայի փ. 1-ին նրբ. Տուն 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	ԱԿԲԱ ԲԱՆԿ ԲԲԸ, Թալին մ/ճ
Հ/Հ 900011030724	Հ/Հ 220173350103000
ՀՎՀՀ 01506515	ՀՎՀՀ 05014841
Գլխավոր քարտուղար՝ Սամվել Մելիադյան	Նախագահ՝ Անահիտ Սրբազարյան
(ստորագրություն) Կ.Տ.	(ստորագրություն) Կ.Տ.

Հավելված N 1
2024թվականի 02 01-ին կնքված
N ԴՏՊ-1141-11016/24Թ պայմանագրի

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Կազմակերպությունը նշում է միայն այն լրացուցիչ միջոցառումները, որոնք նախատեսված չեն N 7 հավելվածով:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Գլխավոր քարտուղար՝ Սամվել Մուրադյան

/ստորագրություն/ Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

Նախագահ՝ Անահիտ Աբգարյան

/ստորագրություն/ Կ.Տ

Հավելված N 2
20 24թվականի 02 04-ին կնքված
N ԴՏՊ-1141-11016/24Թ պայմանագրի

ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ N__

1. Ընդհանուր տեղեկատվություն

Միջոցառման անվանում	
Դրամաշնորհի N	
Դրամաշնորհատու կազմակերպություն	
Դրամաշնորհառու կազմակերպություն	
Միջոցառման իրականացման ժամանակահատված	
Հաշվետու ժամանակահատված	
Ներկայացման օր	
Հաշվետվության պատասխանատու (անուն, ազգանուն, պաշտոն)	

2. Բովանդակային հաշվետվություն

2.1. Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 և թիվ 7 հավելվածներով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:

2.2. Խնդրում ենք նկարագրել միջոցառման առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ միջոցառման խնդիրների/նպատակի իրականացմանը:

Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)

2.3. Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են միջոցառման գործողությունների իրականացմանը:

2.4. Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):

2.5. Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել միջոցառման աշխատանքային պլանով, բայց իրականացվել են միջոցառման նպատակին հասնելու համար:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Գլխավոր քարտուղար՝ Սամվել Մուրադյան

/ստորագրություն/ Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

Նախագահ՝ Անահիտ Աբգարյան

/ստորագրություն/ Կ.Տ

Հավելված N 3
2024 թվականի 02 07-ին կնքված
N ԴՏՊ-1141-11016/24Թ պայմանագրի

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

<< 2024 թվականի պետական բյուջեի----------ամսում կատարված ծախսերի գծով փոխհատուցման ենթակա գումարների վերաբերյալ

Ծախսային հոդվածներ		Հաստատված նախահաշվի գումարը		Հաշվետու ժամանակահատվածում			Տարեսկզբից աճողական			
Տնտեսագիտական դասակարգման սինթետիկ հաշիվների անվանումը	ծածկագիրը	Պետական բյուջեից	Այլ միջոցներից նախատեսված	Նախատեսված գումարը	Պետական բյուջեից փոխհատուցման ենթակա գումարը	Այլ միջոցներից կատարված դրամական ծախսեր	Նախատեսված գումարը	Պետական բյուջեից փոխհատուցման ենթակա գումարը	Այլ միջոցներից կատարված դրամական ծախսեր	Այլ աղբյուրների անվանումները
1	2	3	4	5	6	7	8	9	10	11
ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ՝	x	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0
Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ	4111									
Էներգետիկ ծառայություններ	4212									
Կոմունալ ծառայություններ	4213									
Կապի ծառայություններ	4214									
Ապահովագրական ծախսեր	4215									
Գույքի և սարքավորումների վարձակալություն	4216									

Հանձնեց՝
Կազմակերպության գործադիր տնօրեն՝
ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Գլխավոր քարտուղար՝ Սամվել Մուրադյան
/ստորագրություն/ Կ.Տ

Կազմակերպություն՝
ԿԱՏԱՐՈՂ
Նախագահ՝ Անահիտ Աբգարյան
/ստորագրություն/ Կ.Տ

Հավելված N 4
2024 թվականի 02 02-ին կնքված
N ԴՏՊ-1141-11016/24Թ պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

հազար դրամ

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	Մրցույթի պլանով նախատեսված (CPV) կոդը	անվանումը	Միջոցառման Կատարման դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2024 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
Լոտ 11	99999999/831	«Ընտանիքում բռնության ենթարկված անձանց աջակցության կենտրոնների ծառայություններ»	1,083.0	2,166.0	3,249.0	4,332.0	5,415.0	6,498.0	7,581.0	8,664.0	9,747.0	10,830.0	11,913.0	13,000.0	13,000.0

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է մինչև ֆինանսական միջոցների նախատեսումը, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:*

*** հրավերում գումարները չեն նշվում, իսկ պայմանագիրը կնքելիս նշվում է կոնկրետ գումարի չափ*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Գլխավոր քարտուղար՝ Սամվել Մուրադյան

/ստորագրություն/ Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

Նախագահ՝ Անահիտ Աբգարյան

/ստորագրություն/ Կ.Տ

Հավելված N 5
2024 թվականի 02 01-ին կնքված
N ԴՏՊ-1141-11016/24Թ պայմանագրի

Կատարող

_____

_____

գտնվելու վայրը _____
հհ _____
հվհհ _____

Պատվիրատու

_____

_____

գտնվելու վայրը _____
հհ _____
հվհհ _____

ԱԿՏ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«___» _____ 2024 թ

Պետության կողմից դրամաշնորհի ձևով _____ կազմակերպությանը տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին պայմանագիր

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» , 20 թ.

Պայմանագրի համարը՝ _____

Կողմերը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ ներկայացված ----- հաշվետվությունը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմն իրականացրել է հետևյալ միջոցառումները՝

N	Իրականացված միջոցառման								
	անվանումը	գործառույթի համառոտ նկարագիրը	արդյունքը			կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ պայմանագրի/
			ըստ պայմանագրի	փաստացի		ըստ պայմանագրի	փաստացի		
				Նոր ընդգրկված շահառուների թվաքանակ	Ընթացիկ շահառուների թվաքանակ				

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և հաշվետվությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն

Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն

Կ.Տ.

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Գլխավոր քարտուղար՝ Սամվել Մուրադյան

/ստորագրություն/ Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

Նախագահ՝ Անահիտ Աբգարյան

/ստորագրություն/ Կ.Տ

Հավելված N 6

2024 թվականի 01 01-ին կնքված
N ԴՏՊ-1141-11016/24Թ պայմանագրի

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՆԱԽԱՀԱՇԻՎ
(ՀՀ պետական բյուջեից տրամադրվող ֆինանսական միջոցների մասով)

Դրամաշնորհառու «ԹԱԼԻՆ-ՀՈՒՅՍ» ՍՈՑ.ՀԿ
Ծրագրի անուն « Ընտանիքում բռնության ենթարկված անձանց աջակցության կենտրոնների ծառայություններ»
Ծրագրի տևողություն 01.01.2024-30.12.2024

Հ/Հ	Բյուջեի տողի նկարագրական	Տոկոս	Միավոր	Միավորի քանակ	Միավորի արժեք (ՀՀ դրամ)	Պահանջվող գումար (ՀՀ դրամ)	Տոկոս ընդհանուրի մեջ
Ա	*Աշխատավարձ*						
1.1	*Ծրագրի ղեկավար*	40.3 %	ամիս	12	230000	2 760 000	39.1 %
1.2	*Սոցիալական աշխատող*	22.8 %	ամիս	12	130000	1 560 000	22,4 %
1.3	*Սոցիալական աշխատող*	12.3 %	ամիս	12	75000	900 000	12.1 %
1.4	*հոգեբան*	12.3 %	ամիս	12	70000	840 000	12.1 %
1.5	*իրավաբան*	12.3 %	ամիս	12	70000	840 000	12.1 %
	Ընդամենը Ա	100%				**6 900 000**	97.8%
Բ	***Վարչական ծախսեր***						
2.2	*Կապի ծառայություն*	66%	ամիս	12	5500	66000	1%
2.3	*Գրասենյակային ծախս*	34%	ամիս	10	3400	34000	0.4%
	Ընդամենը Բ	100%				**100000**	1.4%
	ԸՆԴԱՄԵՆԸ					**7 000 000**	
	ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀՋՈՐԱՑՈՒՄ						
Գ	***Վարչական ծախսեր***						
	Աուդիտորական և խորհրդատվական ծախսեր	100%			300 000	300 000	5%
Դ	***Ծրագրային ծախսեր***						
3.1	***մասնագիտական ուսուցման կազմակերպում***						
3.1.1	*Համակարգչային օպերատոր*	21.1%	մարդ	4	150 000	600 000	10%
3.1.2	*վարսահարդարում*	26.3%	մարդ	5	150 000	750 000	12.5%
3.1.3	*մատնահարդարում*	26.3%	մարդ	5	150 000	750 000	12.5%
3.1.4	*դերձակ*	26.3%	մարդ	5	150 000	750 000	12.5%
	ԸՆԴԱՄԵՆԸ	100%			690 000	**2 850 000**	47.5%
3.2	***աշխատանքային գործիքների ձեռքբերում***						
3.2.1	*Վարսահարդարման գործիքներ*	33.3%	փաթեթ	5	90 000	450 000	7.5%
3.2.2	*Մատնահարդարման գործիքներ*	33.3%	փաթեթ	5	90 000	450 000	7.5.%
3.2.3	*Կարի մեքենա*	33.3%	հատ	5	90 000	450 000	7.5.%
	ԸՆԴԱՄԵՆԸ	100%				**1 350 000**	22.5%
4.1	***Կենդանու ձեռքբերում***						
4.1.1	*Հղի կով*	100%	գլուխ	3	500 000	1 500 000	25%

	ԸՆԴԱՄԵՆԸ Դ	100%				5700000	95%
	Ընդամենը					6000000	100%
Ընդամենը						13 000000	100%

Դրամաշնորհառու «ԹԱԼԻՆ-ՀՈՒՅՍ» ՍՈՑ.ՀԿ

Ծրագրի անուն « Ընտանիքում բռնության ենթարկված անձանց աջակցության կենտրոնների ծառայություններ»

Ծրագրի տևողություն 01.01.2024-30.12.2024

Հ/Հ	Բյուջեի տեսակը	Պահանջվող գումարը (ՀՀ դրամ)	Բյուջեի տողի նկարագրական
	Աշխատավարձ		
Ա1	Ծրագրի աշխատակազմի աշխատավարձ		
1.1	*Սոցիալական աշխատող*	1 560 000	*Մեկ սոց.աշխատող 100% ներգրավվածությամբ: Ամսական դրույքաչափը 130000 ՀՀ դրամ*
1.2	*Սոցիալական աշխատող*	900 000	*Մեկ սոց.աշխատող 50%ներգրավվածությամբ, ամսական դրույքաչափը 75000 ՀՀ դրամ*
1.3	*հոգեբան*	840 000	*Մեկ հոգեբան 50% ներգրավվածությամբ, ամսական դրույքաչափը 70000 ՀՀ դրամ:*
1.4	*իրավաբան*	840 000	*Իրավաբան 0,25% ներգրավվածությամբ , ամսական դրույքաչափը 70000 ՀՀ դրամ:*
Ա2	Ղեկավար անձնակազմի աշխատավարձ		
1.1.1	ծրագրի ղեկավար	2 760 000	Մեկ ծրագրի ղեկավար 100% ներգրավվածությամբ, ամսական դրույքաչափը 230000 ՀՀ դրամ:
	Ընդամենը Ա	**6 900 000**	
Բ	Վարչական ծախսեր		
2.2	*Աուդիտորական ծառայություն և խորհրդատվություն*	300000	*Աուդիտորական ծառայության իրականացում և տեղեկանքի տրամադրում*
2.3	*Կապի ծառայություն*	66000	*Ինտերնետ ծառայություն ամսեկան 5500 ՀՀ դրամ*
2.4	*Գրասենյակային ծախս*	34000	*Ներառում է գրենական պիտույքների ձեռք բերման ծախս*
	Ընդամենը Բ	**400 000**	
Գ	Ծրագրային ծախսեր		
3.1	*մասնագիտական ուսուցման կազմակերպում*	2 850 000	*Ներառում է 19 շահառուների մասնագիտական ուսուցման ծախսեր*
3.2	*աշխատանքային գործիքների ձեռքբերում*	1 350 000	*Ներառում է 15 շահառուներին աշխատանքային գործիքների գնում*
3.3	*Կենդանու և անասնակերի ձեռքբերում*	1 500 000	*Ներառում է 3 շահառուներին անասնապահությամբ զբաղվելու համար, ըստ նախասիրության, կենդանու գնում /մեկ շահառուին մեկ կով,/*
	Ընդամենը Գ	**5 700 000**	
	ԸՆԴԱՄԵՆԸ	**13 000 000**	

մասնակցի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը) ստորագրությունը

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՆԱԽԱՀԱՇԻՎ
(մրցույթին մասնակից կազմակերպության կամ այլ ընկերությունների կողմից տրամադրվող ֆինանսական միջոցների մասով)

Դրամաշնորհառու «ԹԱԼԻՆ-ՀՈՒՅՍ» ՍՈՑ.ՀԿ
Ծրագրի անուն « Ընտանիքում բռնության ենթարկված անձանց աջակցության կենտրոնների ծառայություններ»
Ծրագրի տևողություն 01.01.2024-30.12.2024

ՀՀ	Բյուջեի տողի նկարագրական	Տոկոս	Միավոր	Միավորի քանակ	Միավորի արժեք (ՀՀ դրամ)	Պահանջվող գումար (ՀՀ դրամ)	Տոկոս ընդհանուրի մեջ
	Աշխատավարձ						
Ա							
1.1	հաշվապահ		ամիս	12	100000	1200000	
1.2	**Ընդամենը Ա**					**1200000**	
Բ	**Ծրագրային ծախսեր**						
2.1	աուդիտ					300000	
2.2	Տրանսպորտային ծառայություն		կմ	1500	150	225000	
2.3	Գրասենյակային ծախս		ամիս	12	10000	120000	
	Ընդամենը Բ					**645000**	
Գ	**Վարչական ծախսեր**						
3.1	գրասենյակ						
3.2	Կոմունալ վճարներ		ամիս	12	25000	300000	
	Ընդամենը Գ					300000	
	Ընդամենը					**2145000**	

Դրամաշնորհառու «ԹԱԼԻՆ-ՀՈՒՅՍ» ՍՈՑ.ՀԿ
Ծրագրի անուն ***« Ընտանիքում բռնության ենթարկված անձանց աջակցության կենտրոնների ծառայություններ»***
Ծրագրի տևողություն **01.01.2024-30.12.2024**

ՀՀ	Բյուջեի տեսակը	Պահանջվող գումարը (ՀՀ դրամ)	Բյուջեի տողի նկարագրական
	Աշխատավարձ		
Ա1	**Ծրագրի աշխատակազմի աշխատավարձ**		
1.1	հաշվապահ	1200000	Իրականացնել հաշվապահական հաշվառման վարումը, ծրագրի ֆինանսական հաշվետվությունների ժամանակին կազմումն ու ներկայացումը, աշխատավարձերի հաշվարկումը,պետական բյուջե հարկերի և վճարների, պետական արտաբյուջետային սոց ֆոնդերի՝ապահովագրական վճարների, բանկային կազմակերպությունների՝վճարումների ճշգրիտ հաշվեգրում և փոխանցումապահովում, ֆինանսական ծախսերի համապատասխանությանը ՀՀ հաշվապահական նորմերին և դրամաշնորհային ծրագրերի բյուջեների հոդվածներին:
1.1.4	Ընդամենը Ա	1200000	
	Ծրագրային ծախսեր Բ		
2.1	աուդիտ	300000	

2.2	Տրանսպորտային ծառայություն	225000	Տրանսպորտային միջոցները կուղղվեն սոցիալ-հոգեբանական և իրավաբանական խորհրդատվություն տրամադրելու, համայնքային կառույցներ այցելելու, շահառուների հետ աշխատելու համար:
2.3	Գրասենյակային ծախս	120000	
	Ընդամենը Բ	645000	
Գ	**Վարչական ծախսեր**		
3.1	Գրասենյակ		սեփական
3.2	Կոմունալ վճարներ	300000	Գրասենյակի կոմունալ վճարների իրականացում
	Ընդամենը Գ	300000	
	Ընդամենը	**2145000**	

մասնակցի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը)

ստորագրությունը Կ.Տ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Գլխավոր քարտուղար՝ Սամվել Մուրադյան

/ստորագրություն/ Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

Նախագահ՝ Անահիտ Աբգարյան

/ստորագրություն/ Կ.Տ

Հավելված N 7
2024 թվականի 01 01-ին կնքված
N ԴՏՊ-1141-11016/24Թ պայմանագրի

«ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿՎԱԾ ԱՆՁԱՆՑ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ» ՄԻՋՈՑԱՌՈՒՄ

Միջոցառումն իրականացվում է դրամաշնորհի տրամադրման մրցույթում հաղթող ճանաչված կազմակերպության կողմից, որն ընտանիքում բռնության ենթարկված անձանց (այսուհետ՝ շահառուներ) աջակցության կենտրոնների ծառայություններ է մատուցում՝ գործող օրենսդրությամբ սահմանված դեպքերում, կարգով և պայմաններով:

Շահառուներ՝

Միջոցառմամբ նախատեսվում է ծառայություններ մատուցել՝ ըստ լոտով սահմանված շահառուների թվաքանակի (հավելված 1):

Մեթոդաբանական պահանջներ՝

Կազմակերպությունը ծրագիրը իրականացնելիս պետք է հիմնվի հետևյալ իրավական ակտերով նշված պահանջների վրա՝

- «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենք,
- «Ընտանիքում բռնության ենթարկվածների ժամանակավոր աջակցության հաշվեհամարի տնօրինման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2019թ.-ի մարտի 29-ի N 333 -Ն որոշում,
- «Ընտանիքում բռնության դեպքերի կենտրոնացված հաշվառման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2019թ.-ի նոյեմբերի 2-ի №1381 որոշում,

Ազդեցություն

- Հիմք կդրվի ընտանիքում բռնության երևույթի համակարգված կանխարգելմանը՝ նպաստելով կանանց և տղամարդկանց իրապես հավասար հնարավորությունների և իրավունքների արմատավորմանը,
- Կապահովվի ընտանիքում բռնության ենթարկված անձանց անվտանգ միջավայրի, ինչպես նաև օրենսդրությամբ սահմանված սոցիալական այլ ծառայությունների տրամադրման, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ և միջազգային պայմանագրերով ամրագրված դրույթներ,
- Ընտանիքում բռնության ենթարկված անձինք՝ կստանան օրենքով սահմանված համապատասխան աջակցությունները,

- Կապահովվի սերտ համագործակցություն քաղաքացիական հասարակության ոլորտի հետ, քանի որ անհրաժեշտ ծառայությունները մատուցվում են հասարակական կազմակերպությունների միջոցով՝ ծառայությունների պատվիրակման սկզբունքով,
- Կիրականացվի ընտանիքում բռնության ենթարկված անձանց համապարփակ վիճակագրություն,
- Հնարավորության դեպքում կլուծվի ընտանիքում բռնության ենթարկվածներին աշխատանքի տեղավորման և զբաղվածությամբ ապահովման խնդիրը:

ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ
ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ
ԼՈՏ 9-11

NN ը/կ	Դրամաշնորհի միջոցների հաշվին իրականացվող միջոցառման						
	անվանումը	**նկարագիրը**	**կազմակերպության կողմից կատարման ենթակա գործողությունները**	**ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները**	**միջոցառման իրականացման վերջնաժամկետը**	**հաշվետվության ներկայացման կարգն ու ժամկետը**	**պահանջվող գումարը (դրամ)**
1	«Ընտանիքում բռնության ենթարկված անձանց աջակցության կենտրոնների ծառայություններ»	1.Օրենսդրությամբ սահմանված կարգով աջակցության կենտրոն դիմած ընտանիքում բռնության ենթարկված անձանց իրենց իրավունքների մասին տեղեկացում:	Աջակցության կենտրոն դիմած ընտանիքում բռնության ենթարկված անձանց համար հասկանալի լեզվով, իսկ հաշմանդամություն ունեցող անձանց դեպքում նրանց համար մատչելի եղանակով իրենց իրավունքների, հասանելի ծառայությունների և օրենքով	Աջակցության կենտրոն դիմած ընտանիքում բռնության ենթարկված անձանց տեղեկացվածության մակարդակի բարձրացում՝ իրենց իրավունքների վերաբերյալ: Համապատասխան ծառայություններ ստացած անձանց թվաքանակի և ցուցակի առկայություն՝ նախարարության հետ	30.12.2024 թ.	Եռամսյակային հաշվետվության ներկայացում: (info@mlsa.am էլեկտրոնային հասցեին ուղարկելու միջոցով)	Ըստ հայտարարված լոտի:

			նախատեսված պաշտպանության միջոցների և դրանցից օգտվելու կարգի մասին տեղեկացում:	նախապես համաձայնեցված ձև աչափի հիման վրա:			
2		2.Իրազեկման աշխատանքների իրականացում:	Իրազեկում ընտանիքում բռնության հիմնախնդիրների, դրսևորման առանձնահատկությունների և դրա կանխարգելմանն ուղղված աջակցության կենտրոնների գործունեության, մատուցվող ծառայությունների և այլ ընտանեկան բռնությանն առնչվող տեղեկատվության վերաբերյալ:	Հասարակության իրազեկվածության մակադակի բարձրացում, համապատասխան իրազեկում ստացած անձանց թվաքանակ՝ տարեկան առնվազն 300 անձ: Իրազեկման դասընթացների, քննարկումների և միջոցառումների վերաբերյալ լուսանկարների, ինչպես նաև իրազեկում ստացած շահառուների ցուցակի առկայություն՝	30.12.2024 թ.	Եռամսյակայի ն հաշվետվության ներկայացում:	

				նախարարության հետ նախապես համաձայնեցված ձև աչափի հիման վրա:			
3		3.Օրենսդրությամբ սահմանված կարգով ընտանիքում բռնության ենթարկված անձանց անհրաժեշտ ծառայությունների մատուցում:	Ընտանիքում բռնության ենթարկված անձանց աջակցության կենտրոնների կողմից անհատույց հոգեբանական, իրավաբանական օգնության և այլ անհրաժեշտ սոցիալ-վերականգնողական ծառայությունների մատուցում:	Կարգավորված են ընտանիքում բռնության ենթարկված անձանց հոգեբանական վիճակը, պաշտպանված են նրանց իրավունքները, լիարժեք ինտեգրված են հասարակությանը: Համապատասխան որակավորում ունեցող կամ վերապատրաստում անցած մասնագետների առկայություն: Ծառայությունն իրականացվել է սույն նկարագրի մեթոդական պահանջներին համապատասխան: Օրենսդրությամբ	30.12.2024 թ.	Եռամսյակայի ն հաշվետվության ներկայացում:	

				սահմանված կարգով անհրաժեշտ ծառայություններ ստացած անձանց թվաքանակի, ցուցակի ինչպես նաև սոցիալական աշխատողի խորհրդատվության քանակի, հոգեբանի խորհրդատվության քանակի, իրավաբանի /փաստաբանի/ խորհրդատվության քանակի, այդ թվում հայցադիմումի, դատարան ներկայացված գործերի քանակի առկայություն՝ նախարարության հետ նախապես համաձայնեցված ձև աչափի հիման վրա:			
4		4. «Թեժ գիծ» ծառայության մատուցում:	Ընտանիքում բռնության ենթարկված անձանց աջակցության	Ապահովված է ընտանիքում բռնության ենթարկված անձանց իրենց կարիքներից	30.12.2024 թ.	Եռամսյակայի ն հաշվետվությ ան ներկայացում:	

			կենտրոնների կողմից «Թեժ գծի» միջոցով տրամադրվում է անհրաժեշտ խորհրդատվություն:	բխող անհրաժեշտ՝ խորհրդատվության տրամադրումը «Թեժ գիծ» ծառայության միջոցով: «Թեժ գիծ» ծառայության միջոցով համապատասխան խորհրդատվություն ստացած անձանց թվաքանակի և ցուցակի առկայություն՝ նախարարության հետ նախապես համաձայնեցված ձև աչափի հիման վրա:			
5		5.Ընտանիքում բռնության ենթարկված, ինչպես նաև ընտանիքում բռնության ականատես երեխաներին օրենսդրությամբ նախատեսված անհրաժեշտ աջակցության տրամադրում:	Ընտանիքում բռնության ենթարկված, ինչպես նաև ընտանիքում բռնության ականատես երեխաներին ուղղորդում երեխաների ծառայություններ մատուցող կազմակերպություն ներ, անհրաժեշտության	Ապահովված է երեխայի լավագույն շահի իրացումը: Յուրքանչյուր շահառուի մասով առկա է դեպքի վարման նկարագրություն: Երեխաներին ծառայություններ մատուցող կազմակերպությունն ե ր ուղղորդած, ինչպես նաև առաջնային	30.12.2024 թ.	Եռամսյակայի ն հաշվետվությ ան ներկայացում:	

			դեպքում նաև առաջնային հոգեբանական, սոցիալական և այլ տեսակի աջակցության տրամադրում:	հոգեբանական, սոցիալական ծառայություններ ստացած երեխաների թվաքանակի և ցուցակի առկայություն՝ նախարարության հետ նախապես համաձայնեցված ձև աչափի հիման վրա:			
6		6.Օրենսդրությամբ նախատեսված կարգով որոշման կայացում՝ ապաստարանում տեղավորելու մասին:	Աջակցության կենտրոնի կողմից որոշման ընդունում ընտանիքում բռնության ենթարկվածներին և նրանց խնամքի տակ գտնվող անձանց ապաստարանում տեղավորելու մասին՝ նրանց համաձայնությամբ:	Սույն նկարագրի մեթոդական պահանջներին համապատասխան՝ը նտանիքում բռնության ենթարկվածները և նրանց խնամքի տակ գտնվող անձինք ապահովված են անհատույց և ապահով բնակելի տարածքով: Ապաստարան ուղղորդված ընտանիքում բռնության ենթարկվածների և նրանց խնամքի տակ գտնվող	30.12.2024 թ.	Եռամսյակայի ն հաշվետվության ներկայացում:	

				անձանց թվաքանակի, ցուցակի առկայություն՝ նախարարության հետ նախապես համաձայնեցված ձևաչափի հիման վրա:			
7		7.Օրենսդրությամբ նախատեսված կարգով ընտանիքում բռնության դեպքերի վերաբերյալ վիճակագրության վարում:	Աջակցության կենտրոնների կողմից համապատասխան վիճակագրության վարում և սահմանված կարգով արդյունքների ներկայացնում ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն:	Առկա է մեթոդական ցուցումներին համապատասխան ընտանեկան բռնության դեպքերի համապարփակ վիճակագրություն: Վիճակագրությունը վարվում է նախարարության հետ նախապես համաձայնեցված ձևաչափի հիման վրա:	30.12.2024 թ.	Ամենամսյա հաշվետվության ներկայացում:	
8		8.Ընտանիքում բռնության ենթարկված անձանց ուղղորդման միջոցով աշխատանքի	Աջակցում և ուղղորդում են ընտանիքում բռնության ենթարկված անձանց աշխատանքի	Լուծվել են ընտանիքում բռնության ենթարկված անձանց աշխատանքով ապահովման,	30.12.2024թ	Եռամսյակային հաշվետվության ներկայացում:	

		տեղավորման, ինչպես նաև պետությունից կամ համապատասխան կազմակերպություններից սոցիալական աջակցություն ստանալու հարցերում աջակցում:	տեղավորման, ինչպես նաև պետական ծրագրերից կամ այլ կառույցների կողմից իրականացվող ծրագրերից սոցիալական աջակցություն ստանալու հարցերում:	ինչպես նաև սոցիալական աջակցության ստացմանն առնչվող հարցերը: Ուղղորդման միջոցով աշխատանքի տեղավորված, ինչպես նաև պետական և այլ ծրագրերից սոցիալական աջակցություն ստացած անձանց թվաքանակի և ցուցակի առկայություն՝ նախարարության հետ նախապես համաձայնեցված ձևաչափի հիման վրա:			
9		9. Օրենսդրությամբ նախատեսված կարգով ընտանիքում բռնության ենթարկված անձաց իրավական պաշտպանության	Աջակցության կենտրոն դիմած անձի համաձայնությամբ դիմում է ոստիկանության համապատասխան ստորաբաժանմանը՝	Ավահովված է ընտանիքում բռնության ենթարկվածների անվտանգությունը: Ոստիկանություն և դատարան	30.12.2024թ	Եռամսյակայի ն հաշվետվության ներկայացում:	

		ապահովում:	նախազգուշացման կամ անհետաձգելի միջամտության որոշում կայացնելու հիմքերի առկայությունն ստուգելու համար, ինչպես նաև օրենքով նախատեսված դեպքում դատարան դիմում՝ պաշտպանական որոշում կայացնելու դիմումով:	ներկայացված դիմումների քանակի, ցանկի, ինչպես նաև վերոգրյալ մարմինների կողմից կայացրած որոշումների առկայություն՝ նախարարության հետ նախապես համաձայնեցված ձևաչափի հիման վրա:			
10		10. Օրենսդրությամբ սահմանված կարգով պետության կողմից տրամադրվող միանվագ ֆինանսական փոխհատուցման ստանալու գործընթացում ընտանիքում բռնության ենթարկվածներին աջակցում և միջնորդության ներկայացում:	Ընտանիքում բռնության ենթարկվածներին միանվագ դրամական փոխհատուցում տրամադրելու վերաբերյալ միջնորդության կազմում և ներկայացում Լիազոր մամնին, անհրաժեշտ փաստաթղթերի հավաքագրմանն օժանդակում:	Ընտանիքում բռնության ենթարկվածները ապահովված են պետության կողմից միանվագ դրամական աջակցությամբ: Դրամական փոխհատուցում ստացած անձանց ցանկի առկայություն՝ որպես անձնական գործի մաս:	30.12.2024թ	Եռամսյակայի ն հաշվետվության ներկայացում:	
11		11.Համագործակցու	Աջակցության	Լուծված են	30.12.2024թ	Եռամսյակայի	

		թյան ապահովում պետական և տեղական մարմինների, Կանանց ռեսուրս կենտրոնների, ինչպես նաև այլ շահագրգիռ հասարակական կազմակերպությունների հետ:	կենտրոնի կողմից համագործակցություն պետական և տեղական շահագրգիռ գերատեսչությունների, մասնավորապես՝ Միասնական սոցիալական ծառայության տարածքային կենտրոնների, ինչպես նաև շահագրգիռ հասարակական կազմակերպությունների այդ թվում՝ թրաֆիքինգի և շահագործման զոհերին համապատասխան աջակցություն տրամադրող կազմակերպությունների հետ:	միջոլորտային համակարգային խնդիրները և առկա է ներդաշնակեցված համագործակցություն շահագրգիռ բոլոր կառույցների հետ: Համագործակցող կառույցների հետ ունեցած պաշտոնական նամակագրությունների և փաստաթղթերի առկայություն:		ն հաշվետվության ներկայացում:	
12		12. Աջակցության կենտրոնների կողմից կանանց տնտեսական հզորացմանն ու զարգացմանն	Աջակցության կենտրոնների կողմից ծառայությունների մատուցում, որոնց շրջանակներում	Ընտանիքում բռնության ենթարկված անձինք ձեռք են բերել մասնագիտական հմտություններ,	30.12.2024 թ.	Եռամսյակայի ն հաշվետվության ներկայացում:	

		ուղղված ծառայությունների մատուցում՝ ըստ շահառուի նախասիրություններ ի և գնահատված կարիքի, անհրաժեշտության դեպքում նաև գործիքակազմի տրամադրում:	ընտանիքում բռնության ենթարկված անձինք ձեռք կբերեն մասնագիտական հմտություններ, կապահովվեն զբաղվածությամբ:	լուծվել են նրանց զբաղվածության, սեփական կյանքի ինքնուրույն կազմակերպման հարցերը: Համապատասխան ծառայություններ ստացած անձանց թվաքանակի և ցուցակի առկայություն՝ նախարարության հետ նախապես համաձայնեցված ձև աչափի հիման վրա:			

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Գլխավոր քարտուղար՝ Սամվել Մուրադյան

/ստորագրություն/ Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

Նախագահ՝ Անահիտ Սրբուհի

/ստորագրություն/ Կ.Տ